

վէպեր՝ Բախտախնդիրը, Ժառանգորդը, Կննուտ հանգոյց մը, Ոսկիներու համբումն վրայ, Կրակիմ մէջէն եւայլն: (Թէոգիկ՝ «Ամ. Տարեցոյց»ը 1912 էջ 380):

ԳՕԶՈՒՆԵԱՆ Մկրտիչ, Կիւրինցի, իր Մանուկ հօրը հետ Պոլիս գալով ատեն մը առեւտրական գործով կը զբաղի. կ'անցնի Լիբանան ուր 1924-ին Պէյրութի մէջ կը հրատարակէ իր արտօնատէրութեամբ եւ պատասխանատուութեամբ Նոր Փիւնիկ «աղաջային, քաղաքական» կիսապաշտօնաթերթը:

ԳՕԶՈՒՆԵԱՆ Սարգիս, ծնած է Հալաէս 1887 Փետրուարին եւ Քիլիսի աղաջային վարժարանը ստացած է իր նախնական կրթութիւնը: Եզրօր Մխաթի հետ 1886ին Պոլիս գաղթելով՝ իր գլխաւոր զբաղումն ըրած Պոլսոյ բոլոր թերթերուն ծանուցմանց բաժինը՝ 1895էն սկսեալ: Եւրոպական մեծ տուներու ամէն լեզուէ սղոյթեր Պոլսական լրագրաց մէջ առաջին անգամ ընդհանրացնողի փառքն իրեն կը վիճակուի: Սարգիս Քասիմի հիմնած ժամանակ օրաթերթին վարչական գործերը վարած է եւ անոր մահէն ետք արտօնատէր եղած: Սարգիս պատասխանատու տնօրէն եղած է 1912-13 Պոլսոյ մէջ Ժամանակ օրաթերթի փոխարէն լոյս տեսած (74 թիւ միայն) օրաթերթին: (Թէոգիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 126):

Սարգիս Գօշուհեան վարած է նաեւ աղաջային պաշտօններ, ատենապետած է Աղ. պատրիարքարանի Ելեւմոսից Հոգարարձութեան եւ մեռած 1926-ին Պոլսոյ մէջ:

«Հայ Հանրագիտակ»

Մ. ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՎԵՐ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԽԱՆԴԱՄՈՒՐ

Վեր. Հայկազուն Խանդամուր ծնած է 1874ին Մերաստիոյ նահանգի Կիւրին քաղաքը: Որդին է Տօքթ. Սեդրակ Խանդամուրեանի: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ Կիւրինի բողոքականներու դպրոցը: Իր ուսումը շարունակելու համար կը մեկնի Սփազ 1888ին, հետեւելու համար Մերաստիոյ Ամերիկեան բարձրագոյն վարժարանի դասընթացներուն, որուն շրջանը կ'աւարտէ 1892ին: Յետոյ կը մեկնի իր ծննդավայրը Կիւրին, ստանձնելու համար ուսուցչի պաշտօնը Կիւրինի բողոքական վարժարանին մէջ 1892-1893 դպրոցական տարեշրջանին: Ուսման փափաքը զինք կը մղէ երթալ Այնթապ, բայց դժբախտաբար ճամբան իրր յեղափոխական կը ձերբակալուի եւ կը բանտարկուի Մարաշի եւ Հալէսի մէջ: 1894ին, ամերիկեան հիւպատոսին եւ միսիոնարներու միջամտութեամբ ազատ կ'արձակուի եւ կը զբոսի իր ծննդավայրը: 1894ի Սեպտեմբերին Այնթապ երթալով կը յաճախէ Ամերիկեան Կեդրոնական Գոյէճը, որուն շրջանը կ'աւարտէ 1898ին, ստանալով Պատկաւոր Արուեստից տիտղոսը: 1898 Սեպտ.ին Թոգաթի Հայ Աւետարանական դպրոցին տնօրէնութեան պաշտօնին կը կոչուի, ուր կը մնայ մէկ տարի: 1899ի վերջերը կը մեկնի Ամասիա եւ հոն իրր ուսուցիչ հայերէնի կը պաշտօնավարէ մինչեւ 1903 թուականը, Իրրանսեան աղաջային առեւտրական վարժարանին մէջ: 1903 Սեպտ.ին կը մեկնի Մարզուան, տեղւոյն Աստուածարանական դպրոցը իր ուսումը շարունակելու համար, որուն շրջանը կ'աւարտէ 1905ին եւ անմիջապէս պաշտօնի կը կոչուի, նոյն վարժարանին մէջ, դասախօսելով հա-

յերէն լեզուն մինչեւ 1907 թուականը : 1907 Սեպտեմբերին կը մեկնի Գոնիա , պաշտօնավարելու համար Ճէնանեան Գոլէճին մէջ , իբր ներքին տեսուչ եւ հայերէնի դաստիարակ մինչեւ 1911 : Գոնիայի Հայ Աւետարանական համայնքին մէջ տարի մը , 1910-1911 , քարոզչական պաշտօն կը վարէ : 1912ին կը հրաւիրուի Գահիրէ , Հայ Աւետարանական համայնքին հոգեւոր հովիւի պաշտօնով : 1913 Յուլիսին Գահիրէի մէջ կը ձեռնադրուի երէց , Վեր . Մ . Ալլահաաեանէ եւ Վեր . Ահարոն Եիրաճեանէ : 1914ին Գահիրէի մէջ կ'աշխատի հիմնելու Հայ Երիտասարդաց Բրիտանիական ընկերութիւնը , նմանութեամբ Ամերիկեան W. M. C. A. ի :

Պատ . Խանդավառ 1924ին կը հրատարի հայուական պաշտօնէ : 1925 Օգոստոսին կը ստանձնէ Հայ Բարեգործական Ընդհ . Միութեան պատուիրակ գործիչի պաշտօնը Եղիպտոսի եւ Միջին Արեւելքի հայ գաղութներուն համար , եւ մինչեւ 1942 այդ պաշտօնը կը վարէ եւ ապա կը հրատարի թողման պատճառներով : Թարգմանած է հրօնական եւ Ազգային Երգարան անունով զբօրոյիլը : Հ . Բ . Ը . Մ . պաշտօնավարութեան շրջանին , Գահիրէի մէջ հայ ընտանիքներու տուներէն ներս դանձանակներու հաստատման գրութիւնը՝ իր նախաձեռնութիւնն է : 1917-1918 թուականներուն , թրքական բանակէն Երիտասարդութեան հայ գերիներու մօտ 100 հազի իր միջամտութեամբ ազատ կ'արձակուին : Գոնիայի Ճէնանեան Գոլէճի Իկոնիան պաշտօնավարութիւն իբր խմբագիր եւ աշխատակից կը գործակցի երեք տարի : 1912ին Գահիրէի մէջ Լուսաբեր-Արեւ թերթին երեք ամսուան խմբագրութիւնը կը վարէ : Աշխատակցած է Աւետարելի , Պոլսոյ մանկական Հարմարցիտակին , Հայաստանի Կոչմակին , Արեւիկն , Արձագանցին եւ այլ թերթերու , ստորագրելով Ակիւլիմէ կեղծ անունով եւ կամ Հ . Խանդավառ :

«Նիւրբեր Եղիպտոսի Հայոց Պատմութեան համար» Ա . հատոր , Գահիրէ , 1943 :

Ա . Հ . ԳԱՐՏԱՇԵԱՆ

ՏՈՒՐԹ . ՆԱՀԱՊԵՏ ԵՂԻՇԷ ԱՊՏԱԼԵԱՆ

Տոբթ . Նահապետ Եղիշէ Ապտալեան ծնած է 1844ին ի Կիւրին : Ուսումը ստացած է Մարդուանի Ամերիկեան Գոլէճը : Իր ուղիմութեամբ եւ աշխատասիրութեամբ Գոլէճի դասընթացքը աւարտած է մեծ յաջողութեամբ : Ամերիկացի անօրէնին համակրանքը եւ հողածութիւնը շահելով կրցած է Ամերիկա մեկնել , Հարթֆըլտի (Քէնէթիքըթ) աստուածաբանական դպրոցը ուսանելու համար : Ուսման այս շրջանն ալ փայլուն կերպով եւ մեծ պատուով աւարտած ու արժանացած է պոզեստի :

1877-ին քարոզիչ ձեռնադրուած է Հարթֆըլտի մէջ , ուր եւ եղած է Ամերիկ . քաղաքացի : Այս շրջանին ուսանած է Նիւ Եորքի բժշկական դոկտոր , ուր վերաբուժական ճիւղին հմտանալով , իբրեւ բժիշկ վկայուած է 1879ին , ի վերջոյ վերադարձած է Թուրքիա :

Նիկոմիդիայի մէջ ամուսնացած է Օր . Հայկանոյ Պէյազեանի հետ 1882ին : Իր ամուսնութենէն վերջ , կրկին Ամերիկա մեկնած է առանձինն , յետոյ բերած է իր կինը :

1884ին Նորէն Թուրքիա վերադարձած է , Կիւրինի կառավարութեան մասնաւոր հրաւերով ու հաստատուած իր ծննդավայրը , ուր իբրեւ Ամերիկ-